ԱՐԳԱՄ ԱՅՎԱԶՅԱՆ

ՄԵՍՐՈՊԱՎԱՆԻ, ՇՐՋՈՒԻ, ՈՂՈՀԻԻ ԵՎ ՆՈՐԱԿԵՐՏԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Գողթն գավառի (այժմ Նախիջևանի ԻՍՍՀ Օրոուրայի շրջան) ամենամեծ ձորի՝ Գիլան ձորի կամ Բատաձորի ամենավերին մասերում, Զանգեզուրի լեռնաշղթայի բարձրադիր լեռների փեշերում տեղադրված այս գյուղերը գավառի վաղեմի բնակատեղիներից են: Իրենց տեղադրվածությամբ բնակատեղիները և նրանց ճարտարապետական հուշարձանները գտնվելով բանուկ ճանապարհներից հեռու, լեռնային գոտիներում, հնուց ի վեր դուրս են մնացել ուսումնասիրողների տեսադաշտից: Գրականության մեջ (Հ. Ղ. Ալիշան, Ե. Լալայան)* քիչ թե շատ հայտնի է միայն Մեսրոպավանը և նրա վանքը:

Հոդվածում ներկայացվող հուշարձանները, ինչպես նաև չհրատարակված արձանագրությունները (10) օգնում են այդ վաղեմի բնակատեղիների անցյալի ուսումնասիրման գործում և լրացնում են Գողթնի 17—18-րդ դարերի ճարտարապետական համալիրների ամբողջությունը:

*
* *

Ա. Բատաձորի հարավ-արևելյան ձորակներից մեկում, գեղեցկատես լեռների փեշին տեղադրված է Գողթնի հին գյուղերից մեկը՝ Մեսրոպավանը (այժմ՝ Նասիրվաշ): Պատմական աղբյուրներում և ավանդաբար այս գյուղը անվանվել է նաև Մասրեաց, Մասրվանիս, Նասիրվաշ: Ըստ ավանդության գյուղի անվանակոչումը կապված է Մ. Մաշտոցի անվան հետ, որը երկար տարիներ բնակվել է այդտեղ: Ըստ իս այս ավանդությունը հավատի պետք է համարել Կորյունի հաղորդած այն տեղեկություններով, որ Մ. Մաշտոցը հաճախակի է բնակություն հաստատել Գողթն գավառում և տրտմական հոգսերով պաշարվել, խորհել հայկական գրերի ստեղծման շուրջը[1]: Մեսրոպավանը շրջապատող Նավասար կամ Տապանասար (Գլամիղալա), Կըռնակոչ, «Գալիս եմ, Գալիս եմ» և այլ լեռները իրենց պատմական անցյալով կապված են հայ ժողովրդի ավանդությունների հետ: Հայ ժողովրդի ավանդությունների մեջ հայտնի լեռ է հատկապես Նավասարը: Ըստ ավանդության Նոյ նահապետի տապանը համատարած ջրհեղեղի ժամանակ դիպել է այս լեռան գագաթին և վնասվել է մի քանի տախտակներ: Սարն ասել է տապանին: Երբ ի Մասիս, նա բարձր է քան զիս: Դրանից հետո այդ սարի անունը մնացել է որպես Տապանասար, Նավասար[2]: Վերջին տարիներում Տապանասարը գիտության առջև բացել է նոր գաղտնիքներ՝ նրա վրա հայտնաբերվել են ժայռապատկերների մի շարք գոտիներ, որոնք հար և նման են Սյունիքի, Գեղամա լեռների ժայռապատկերներին: Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ Տապանասարի հարավ-արևելյան լանջի մոտ գտնվող Կռնակոչ լեռան ստորոտում գտնվում է բնական և հետաքրքիր մի անձավ, որը մինչև այժմ էլ կոչվում է Մաշտոցի անձավ: Ըստ ավանդության, Մեսրոպավանում մինչև քրիստոնեական վանքի կառուցումը,

---

* **Հ. Ղ. Ալիշան**, Միասական, Վենետիկ, 1893: **Ե. Լալայան**, Գողթն (առանձնատիպ «Ազգագրական հանդեսից»), Թիֆլիս, 1906:

[1] **Կորյուն**, Վարք Մաշտոցի, Եր., 1969, էջ 97: **Մ. Արեղյան**, Մ. Մաշտոցը և հայ գրի և գրականության սկիզբը («Սովետական գրականություն»), Եր., 1941, № 1, էջ 48:

[2] **Ա. Դանիելյան**, Ավանդապատում, Եր., 1969, էջ 12:

այդ անձավում Մ. Մաշտոցը իր աշակերտների հետ բնակվել է 17 տարի[3]:

Մեսրոպավանը և նրա շրջակայքը հնուց հայտնի է եղել մի շարք հուշարձաններով՝ որոնց թվում նշանավոր է ս. Գրիգոր վանքը, որը հետագայում գործել է Մեսրոպավանի ծխական դպրոցը: Այժմ այս վանքի միակ կիսականգուն հուշարձանը նրա եկեղեցին (նկ. 1) է: 1930-ական թվականների երկրաշարժից քանդվել է եկեղեցու գմբեթը, գավիթսրահը, որից հետո այն մատնվելով անուշադրու-



Նկ. 1. Մեսրոպավանի Ս. Գրիգոր կամ Ս. Մեսրոպ Մաշտոց վանքը

վերանվանակոչվել է Մ. Մաշտոցի անվամբ: Այս վանքը, որը գտնվում է գյուղի արևմտյան կողմում, Ալանգեազ փոքրիկ վտակի աջ կողմում գտնվող մի հարթ տարածության վրա, այժմ կիսակործան վիճակում է: Ըստ ավանդության այս վանքի սկզբնական շինությունը կատարել է Գողթնի Շաբիթ իշխանը, 456 թ.:

Մեսրոպավանի Մ. Մաշտոց եկեղեցու հիմնման և վերանորոգումների մասին գրավոր աղբյուրներում տեղեկություններ չեն պահպանվել: Դատելով վիմագիր արձանագրությունների տվյալներից, պետք է ենթադրել, որ այս եկեղեցին վերանորոգվել է հիմնականում 15-րդ և 17-րդ դարերում: Այն գյուղի բնակիչների ջանքերով վերանորոգվել է նաև 19-րդ դարի վերջերին: Այս եկեղեցուն կից՝ մինչև 1915 թ., թյան ավելի է խարխլվել: Մ. Մաշտոց վանքի եկեղեցին արևելք-արևմուտք ձգված, ուղղանկյուն հատակագծով (նկ. 2) քառամույթ գմբեթակիր հուշարձան է, որը կազմված է խորանից, զույգ ավանդատներից և աղոթասրահից: Եկեղեցու չորս մույթերի վրա վեր է խոյանում ութ լուսամուտներով մեծ գմբեթը, որի արևելյան մասում տեղադրված է եղել նաև փոքրիկ զանգակատուն: Մ. Փափազյանը, որը մի քանի տողով նկարագրել է այս եկեղեցին, սխալմամբ նշել է որ այն «առանց կաթուղիկէ, նման Պիստու եկեղեցոյն...»[4]:

Մ. Մաշտոց եկեղեցու ներքնամասը սվաղված է, որի վրա նկատվում են որմնանկարների բեկորներ: Ըստ Ե. Լալայանի տվյալների, եկեղեցու. «սեղանը

[3] **Ա. Ղանալանյան,** նշվ. աշխ., էջ 37:

[4] **Մ. Փափազեան,** Գողթան գավառ (լուսանկարչական ալբոմ), Վաղարշապատ, 1891, № 296:

զարդարուած է Ոսկան Ոսկանեանի նուիրած բաւական գեղեցիկ պատկերներով*[5]: Եկեղեցին արտաքինից աւերուած է թվում, կառուցված է սրբատաշ և կիսամշակ բազալտանման քարերից: Միակ մուտքը գտնվում է արևմտյան ճակատում, որը բացվել է գավիթ-սրահի մեջ: Լուսամուտները նեղ բացվածքներ ունեն:



Նկ. 2. Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու հատակագիծը

Եկեղեցու արևմտյան ճակատին կցված է եղել Բրա գավիթ-սրահը, որը ըստ իր հորինվածքի կառուցված է եղել չորս մույթերի օրինակով:

Մ. Մաշտոց վանքը ունեցել է նաև մի շարք արձանագրություններ, որոնց մի մասը ժամանակին հրատարակել է Ե. Լալայանը: Այժմ այդ արձանագրությունների մեծ մասը տեղում չկա: Եկեղեցու մեջ ընկած մի խաչքարի խաչի շուրջը և նրա տակ՝ ինը տող.

1 Խ(ա)չս
2 [կան]կնեց
3 [ւ]ի՛շ(ա)տ(ա)կ
4 Թադոսին [և մաւր]
5 Գուհար[ին և հաւր]
6 Ալիզրե[կին]
7 Ամիրջանին Սիր
8 ունիկին ....
9 թվ [ՉԹ] (1460)[6]

Եկեղեցու պղնձե ձևավոր և ութ թևանի մեծ խաչի վրա՝

1 1903 Թ. ՅՈ(Ի)ՆԻ(Ս)
2 Յ(ԻՇԱՏԱԿ) Է ԳՈՒՎԱՐԹ Յ.

Այս պղնձաձույլ խաչի ներքևում՝ շրջանաձև սկավառակի վրա Գ, Մ, Ծ և երկու այլ անընթեռնելի տառեր:

Եկեղեցու մոտ, ծառից կախված պահպանվում է Բրա գեղեցկատես զանգը (նկ. 3): Այս զանգը*, որը իր վրա կրում է արձանագրություն և պատկերաքանդակներ, ձուլվել է 1894 թ.: Արձանագրությունը գրված է ռուսերեն՝ հին դրուսական կիրիլյան այբուբենի գեղագիր տառերով, զանգի ներքևի մասում.

1894 ГОДА ОТЛИТЬ ЕЬ..ДЕ НАСЛЕДНИНЫ НИКОЛАЮ АЛЕКСЕЕВИЧУ ГОРОДЕ СЛОБОДСКОМЪ ЕЮТСКОЙ ГУБЕРНИИ.

Մ. Մաշտոց վանքի հյուսիսային կողմում գըտնըվում է Մեսրոպավանի գերեզմանատունը, որը ունի նաև մի շարք հին տապանաքարեր: Գերեզմանատանը աչքի է ընկնում նաև խոյաքանդակ տապանաքարերը, որոնցից մեկը ունի թվակիր արձանագրություն (նկ. 4):

1 ԱՅՍ ՏԱՊԱ(Ն) Է
2 ԹԱԹՈՍԻ ՈՐԴԻ
3 ՈՀԱՆՋԱՆԻՆ ԹՎ ՌՃԼ(1681)

*
* *

Բ. Մեսրոպավանից 5—6 կմ դեպի հարավ-արևմուտք, Ղազարի սար կոչվող լեռան փեշին, բավականի խորը ձորի դարավանդներից մեկի վրա տեսանելի են Գողթնի հին գյուղերից մեկի՝ Շրջուի, Սրջուի կամ Սարճուի (Սարջու) ավերակ հետքերը: Շրջուն, ուր կարող էր բնակվել 50—80 տուն բնակչություն, փաստորեն 19-րդ դարի երկրորդ կեսերից լքված և անմարդաբնակ էր, որի ավերակ շինությունները տարիներ շարունակ հարևան Տեի, Թիվի գյուղի անասնապահների համար ծառայում է որպես ամառանոց: Պետք է ենթադրել, որ Ռուսաստանի Խերսոնի մարզի Գրիգորոպոլ քաղաքի

[5] Ե. Լալայան, Գողթն, էջ 87:

[6] Այս արձանագրությունը 1—3 տողերի բացակայությամբ և որոշ տարընթերցումով տե՛ս Ե. Լալայանի մոտ (նշվ. աշխ., էջ 87):

* Մեսրոպավանի զանգը հար և նման է պատմական Ատրպատականի նահանգի Արտազ գավառի հոչակավոր ս. Թադեի վանքի զանգերից մեկին, որը ամենայն հավանականությամբ ձուլվել է նույն ձուլարանում, 1886 թ. (զանգի լուսանկարը տե՛ս **Լ. Գ. Սինասեան**, Իրանի հայկական վանքերը, Թեհրան, 1971, էջ 99):



Նկ. 3. Մեսրոպավանի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու զանգը

հայկական եկեղեցիների՝ ս. Աստվածածնի և Պողոս-Պետրոսի, մերձակայքում եղած տապանաքարերից երկուսի վիմագրերում նշված սրջլրվացի, սրճվացիները Շրջուից տեղափոխվածներ են կամ էլ վաճառականական դասի ներկայացուցիչներ.

1. «Այս է տապան հանգստեան արևելցի և ի քաղաքէն Նախճավանի և ի գիւղէն Սրճվացի մահտեսի Պերխուդարի կողակից Կետսամանին, որ հանգեաւ թվ ՌՃԺԹ (1670)»:

2. «Այս է տապան հանգստեան արևելցի և քաղաքէն Նախչրվանի և գիւղէն Սրջլրվացի Պապաջանի որդի մահտեսի Գիֆրդէն ... թուէ (տրէ) ամսին, որ հանգեաւ է թվին ՌՃՂ (1714)»[7]:

Շրջուն Գողթնի գյուղերի թվում հիշատակվում է Ագուլիսի ս. Թովմա վանքի տաճարի արևմտյան մուտքի բարավորի 17-րդ դարում քանդակված արձանագրությունում. «Եւ Շրջու ընդ Մասրեւան»[8]: Շրջուի այժմյան ավերակներում կիսախարխուլ վիճակում կանգուն է նրա եկեղեցին (նկ. 5), որը կառուցված է վաղեմի գյուղի հյուսիս-արևելյան լեռնալանջի փեշին: Այս եկեղեցին, որը ըստ իր հատակագծի (նկ. 6) եռանավ բազիլիկա է, կառուցված է սրբատաշ բազալտից և տեղական քարերից, ունի չորս մույթեր և մեկ մուտք՝ արևմտյան ճակատում: Եկեղեցու խորանը հնգանիստ կազմություն ունի, որը իր երկու կողմերում ունի ավանդատներ: Խորանի, ավանդատների և շինության այլ մասերում թողնված են հատուկ թաքստոցներ: Եկեղեցու ավանդատները և խորանը լուսավորվում են արևելյան որմի մեկական նեղ լու-

[7] **Хр. Кучук—Иоанесова**, Армянская надписи вы г. Григориополь Херсонской губернии, Древности восточная. (Труды восточной коммисии Императорского Московского Археологического общества), том второй, выпуск 1, Москва, 1896, стр. 126.

[8] **Հ. Ղ. Ալիշան**, նշվ. աշխ., էջ 326: **Ե. Լալայան**, Գողթն, էջ 69:

Նկ. 4. Խոյաձև տապանաքար Մեսրոպավանի գերեզմանատանը

սամուտներով, իսկ աղոթասրահը՝ հարավային որմի համանման երեք և արևմտյան ճակատի մեկ մեծ և երկու նեղ լուսամուտներով: Եկեղեցին թեքադիր դպրում տեղադրված լինելու հանգամանքով հյուսիսային որմում լուսամուտներ չունի:

Շրջուի եկեղեցու արևմտյան ճակատին կցված է նրա գավիթ-սրահը, որը գրավում է եկեղեցու ընդլայնական ամբողջ ճակատը: Այժմ այդ գավիթ-սրահը կիսականգուն է, որը կառուցված է չորս մույթերի հորինվածքով: Գավթի հյուսիսային և հարավային ճակատները ևս կամարակապ բացվածքներով բաց են: Արևմտյան ճակատի չորս մույթերի կամարները նստած են եկեղեցու արևմտյան որմի տրոմպերի վրա:

Շրջուի եկեղեցու շրջակայքում տեսանելի են մի քանի շինությունների ավերակ հետքեր, որոնք ժամանակին առնված են եղել պարսպի մեջ: Ինչպես Շրջու գյուղի, այնպես էլ նրա եկեղեցու հիմնադման, անվան և վերանորոգումների մասին տեղեկություններ հայտնի չեն: Ե. Լալայանի ուսումնասիրության ժամանակ եկեղեցու բեմի շարվածքում տեղադրված է եղել մի խաչքար այս արձանագրությամբ.

«Յիշատակ է խաչս մանտեսի Աւետիսի որդոյ
ուստա
Յուսէփին թվին ՌՃԼԹ» (1680)[9]:

Կարելի է ենթադրել, որ Շրջուի եռանավ բազիլիկայի այժմյան կանգուն շինությունը վերանորոգվել է 1680 թ., ուստա Յուսեփի կողմից: 1780 թ. Մարգար գրչի ձեռագրերից մեկի հիշատակարանում նշված է Ագուլիսի ս. Թովմա վանքի միաբանական դասի անդամների անունները, որոնց թվում նաև «Աղեքսանդր վարդապետն Շրջուացի»-ն[10], որը ըստ երևույթին Շրջուի եկեղեցու առաջնորդն է եղել:

*
* *

Գ. Մեսրոպավանից 4—5 կմ դեպի հյուսիս-արևմուտք, Բատաձորի ապառաժոտ լեզվակներից մեկի վրա, Թավաքալի անվանվող լեռան փեշին փռված

[9] **Ե. Լալայան,** Գողթն, էջ 92:

[10] **Հ. Ոսկեան,** Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, Վիեննա, 1942, էջ 715:



Նկ. 5. Ծրջուի եկեղեցու արևմտյան ճակատը

է Գողթնի հին հայկական գյուղերից մեկը՝ Ողոհին, Աղահեցիկը, որը այժմյան Օրդուբադի շրջանի Ալահին գյուղն է: Ողոհին, որը գտնվում է Գողթնի նշանավոր ավաններից մեկի՝ Բիստի, մոտ, նրանից 2,5 կմ դեպի հյուսիս-արևելք, հնուց ի վեր միջին մեծության բնակատեղի է եղել: 1827 թ. այդտեղ բնակություն են հաստատել պարսկահայերը, որոնք գաղթել են Մաժանքարից, Ղարադաղից և Սալմաստից:

Ստ. Օրբելյանի պատմության մեջ Երնջակ գավառի գյուղերի թվում, Բիստի և նրա հարևան բնակատեղիների շարքում հանդիպում ենք Ողոհի, Ոզոհի անվանը[11], որը ըստ մեր տեղադրության, այժմյան Ալահին գյուղն է: Ողոհին այնուհետև Աղահեցիկ անվանակոչմամբ տեղ է գտել նաև Ագուլիսի ս. Թովմա վանքի եկեղեցու արևմտյան մուտքի բարավորին 17-րդ դարում քանդակված արձանագրությունում[12]: Պատմական Ողոհի-Աղահեցիկ-Ողոհեցիկ գյուղի շրջակայքի և գերեզմանատան ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդտեղ մարդիկ բնակություն են հաստատել վաղ միջնադարից: Գյուղի արևմտյան մասում գտնվող գերեզմանատանը կան 14—15-րդ դարերի մի քանի խաչքարեր, տապանաքարեր: Ողոհին նշանավոր է հատկապես իր կամուրջով, ս. Ստեփանոս եկեղեցիով և ս. Խաչ վանքով: Վերջինս այժմ ավերակ է և վեր է ածվել մատուռի: Այդ վանքատեղի ուսումնասիրությունը վկայում է, որ այժմյան մատուռի տեղում մինչև 19-րդ դարի վերջերը եղել է եկեղեցի: Այս վանքը ըստ ս. Ստեփանոս եկեղեցում պահպանվող արձանագրության, 17-րդ դարում ունեցել է մեծ կալվածատիրության:

Ողոհիի ս. Ստեփանոս կեղեցին, որը գտնվում է գյուղի կենտրոնում, կառուցված է տեղական գորշ և սրբատաշ քարերից: Ունի գմբեթավոր քառամույթ բազիլիկայի հորինվածք, որի միակ մուտքը գտնվում է արևմտյան ճակատում: 1980-ական թվականների երկրաշարժից ավերվել է եկեղեցու գմբեթը, հարավային ավանդատան, աղոթասրահի ծածկի մի մասը և որմերում ունի վտանգավոր ճեղքեր: Այս եկեղեցին ինչպես արտաքինից, այնպես էլ ներսից անշուք ու հասարակ է:

[11] «Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական», Մոսկվա, 1861, էջ 378: **Ղ. Ալիշան**, Սիսական, էջ 344:

[12] **Հ. Ղ. Ալիշան**, Սիսական, էջ 326: **Ե. Լալայան**, Գողթն, էջ 69:

Ա. Ստեփանոս եկեղեցու հիմնման ու նորոգումների մասին գրավոր տեղեկություններ չեն պահպանվել: Ըստ եկեղեցու որմերում տեղադրված և ներսում գտնվող արձանագրությունների տարեթվերի մատնանշմամբ, այն վերանորոգվել է 17-րդ դարի կեսերին: Հետագայում շինությունը, ըստ մուտքի կամարից վերև, անմիջապես լուսամուտի տակ տեղադրված մի փոքրիկ խաչքարի արձանագրության վերանորոգվել է՝



Նկ. 6. Շրջուի եկեղեցու հատակագիծը

1 ՀԱՍԱՐԱԿ(ՈՒ)Թ(ԵԱՄ)Բ
2 ՆՈՐՈԳԷՅԻՄՔ
3 Ս(ՈՒ)ՐԲ ԵԿԷՂԷՅԻՍ
4 Ի 1906 ԹԻՎ

Եկեղեցու հյուսիսային ավանդատան մուտքից վերև տեղադրված մի գեղաքանդակ փոքրիկ խաչքարի խաչից ներքև, հարթեցված մասում 5 տող:

1 Խաչ(ս) յի(շա)տակ է տ(է)ր
2 Մ(ե)սրոբին եւ ի[ր]
3 կողակիցին Գու
4 լին թվ Ռ
5 ճ (1651) ի[ց]

Եկեղեցու հարավային ավանդատան մուտքից վերև տեղադրված փոքրիկ խաչքարի վրա երկու տող՝

1 Խ(ա)չս յի
2 շա(տա)կ է [թվ] ՌՃ (1651)

Եկեղեցու մեջ բնկած և կոտրված խաչքարի խաչի քանդակից ներքը չորս տող.

1 Թ(վ) ՌԽ (1558)
2 [խ]աչս յիշա
3 տ(ա)կ տ(է)ր Մ(ար)տ(ի)րո
4 պին

Մեկ այլ կոտրված խաչքարի ներքևի մասում 5 տող, որի տողերի սկիզբները բաքաքալված է.

1 [ԽԱՉՍ ՅԻ]ՇԱՏԱԿ
2 [Է...ՐՈՍԻՆ]
3 .....ՏԱՆ
4 ... [ԹՎ] ՌԿԷ (1618)
5 ....Խ..

Ինչպես վերևում նշեցինք, այս եկեղեցում գտնվում է ս. Խաչ վանքի կալվածատիրական արձանագրությունը: Վերջինս կազմված է 14 տողից և քանդակված է մոտ 0,45 մ լայնություն և 0,70 մ բարձրություն ունեցող մի հարթեցված քարի վրա՝

1 ԱՅՍ Է Ս(ՈՒՐ)Բ Խ(Ա)ՉԻՍ ԱՄԻՆՅԱՉ
2 ԵՒ ՍԱՀՄԱՆ Լ.Բ ԵԼԵ ԿՈՂՄԻ
3 Ց ԿՕԼՈՄ ԿԼՈՄ ՀԵՐԱՅԻՆ
4 ԿՈՂՄԻ ՅՌԻՍՈՒՈՎ ՃԱՆԱՐԱՐ
5 ՄԲԿԻ ԱԽԲԲԸ ՁՈՐԻ ԱՇԱՐԷ
6 ՎԱՄՈՒԻ ԿՈՂՄԻՑ ,ԿԵՈՒՐ
7 ՎԵՐԵԻ Ս(ՈՒՐ)Բ Խ(Ա)ՉԻ ԱՂԻ ՁՈՐԸ [Վ]
8 ԵՐԵԻ ԿԵՂԻ Ղ... ՅՈՒՍԻՍ
9 ՍԻՆ ԿՈՂՄ(Ի)Ց ՂԱԼԱՄԱ
10 ԲՈՒԻ ՁՈՐԸ ՎԵՐԵ ՂԱՐԱ
11 ԲԱՂՈՒ ՃԱՆԱՐԱՐԻ
12 ԿԱ(ՄՈՒ)ՐՋԻ ԱՂԲԻՒՐՆ ՃԱ
13 ՆԱԲԱՐԸ ԻՆՈ(Ի)Մ Է ԿՈՒԼՈՒ
14 Մ ԿՈՒԼՈՒՄ ԿԱԿԱՅԹԸ ԹՎ ՌՃԺԲ (1663)

Այս արձանագրության մեջ հիշատակվող տեղանունների մի քանիսը այժմ էլ այդպես անվանակոչվում են:

Ողոնիի հուշարձաններից ուշադրության է արժանի նաև նրա կամուրջը (նկ. 7): Վերջինս, որը կանգուն է, կառուցված է Գիլանի վտակի վրա: Իր կազմությամբ երկկամար հորինվածք ունի, որի կառուցվածքը իրականացված է ճեղքված որձաքարերից և մասամբ էլ մաքուր տաշած բազալտ քարերից: Կամրջի երկու կամարները իրենց բացվածքներով ունեն տարբեր չափեր, որը բխում է տեղանքի թելադրանքով: Ձախակողմյան կամարը իր բացվածքով և թռիչքով զգալի չափով փոքր է աջակողմյան կամարից: Կամրջի թաղերի կամարները և ճակատները շարված են խնամքով, որի պատճառով այն լավ է պահպանվել և մինչև այժմ ծառայում է իր նպատակին:

Հավանական է ենթադրել, որ այն կառուցված է եղել 1663 թ. առաջ, քանի որ այս կամուրջը հիշատակված է ս. Խաչ վանքի 1663 թ. արձանագրության մեջ: Կամուրջը կառուցված լինելով լեռնային տարանցիկ երթուղիներից մեկի վրա, դարեր շարունակ Գողթնի և Երնջակի գլխավոր բնակատեղիների մի մասը կապել է իրար: Այդ կամրջով է



Նկ. 7. Ողոռի-Աղահեցիկի կամուրջը

անցել նաև Գողթնից Ղարաքաղ մեկնող ճանապարհներից մեկը, որի համար էլ ս. Խաչի արձանագրության մեջ այն անվանվել է «Ղարաքաղու ճանաբարի կա(մու)րջ»: Գիլան գետի վրա կառուցված ավելի քան վեց կամուրջների շարքում Ողոռիի կամուրջը 17-րդ դարի հետաքրքիր ճարտարապետական հուշարձաններից մեկն է հանդիսանում:

*
* *

Դ. Գողթնի հնամենի գյուղերից մեկը՝ Նորակերտը, որը այժմ անվանվում է Նիրգուդ, գտնվում է Բստաձորի ամենավերին մասում, Զանգեզուրի լեռնաշղթայի բարձրադիր գոտիներից մեկում: Այս գյուղը տեղադրված է բավականի խորը ձորի մեջ, շրջակա լեռներն ու բլուրները պատած են բազմազան բուսականությամբ, անտառներով ու պուրակներով:

Գյուղի հուշարձանների թվում հետաքրքրական է նրա եկեղեցին, վաղեմի բերդը և գերեզմանատունը, որոնք այս կամ այն չափով խոսում են բնակատեղիի 14—18-րդ դարերի կյանքի մասին: Նորակերտի հարավային մասում, գյուղ մտնող ճանապարհի ձախ կողմում գտնվող գերեզմանատան ուշ շրջանի տապանաքարերի և խոյաքանդակների թվում կան նաև մի քանի 14—16-րդ դարերին պատկանող տապանաքարեր: Գյուղի հյուսիս-արևելյան կողմում, անմիջապես գյուղի մոտ գտնվող մի բրգաձև լեռան վրա տեսանելի են բերդի պարիսպների և այլ շինությունների հետքեր:

Նորակերտի հուշարձաններից աչքի է ընկնում նրա եկեղեցին, որը այժմ կիսախարխուլ վիճակում է: Այս եկեղեցու անվան, նրա կառուցման և վերանորոգումների մասին տեղեկություն հայտնի չէ: Նիրգուդի եկեղեցին (նկ. 8), որը գտնվում է գյուղի կենտրոնում, հարթ տարածության վրա, երկար ժամանակ անուշադրության մատնված լինելու պատճառով քանդվել է եկեղեցու ծածկի հարավային մասը, ավանդատների ծածկերը և այլ հատվածներ: Նիրգուդի եկեղեցին նույնպես եռանավ բազիլիկա է, որի հորինվածքը բաղկացած է արևելյան կողմում գտնվող կիսաշրջանաձև խորանից, զույգ ավանդատներից և աղոթասրահից: Աղոթասրահի չորս քառակուսի կտրվածքով մույթերով եկեղեցին բաժանվել է երեք նավի: Ունի մեկ մուտք, որը գտնվում է արևմտյան ճակատում:

Նորակերտի եկեղեցու խորանը և ավանդատները լուսավորվում են արևելյան որմի մեկական նեղ ալաքաձև լուսամուտներով, իսկ աղոթասրահը՝ հյուսիսային և հարավային որմերի նույնանման երեքական լուսամուտներով և արևմտյան ճակատում, մուտքից վերև բացված մեկ լուսամուտով: Այս ե-

Նկ. 8. Նորակերտի եկեղեցին

կեղեցում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում նրա խորանը, որի հատակը համահավասար է աղոթասրահի հատակին՝ մի հատկանիշ, որը բնորոշ է Հայաստանի վաղ միջնադարի եկեղեցիներին:

Նորակերտի եկեղեցու ինչպես ներքին տարածությունը, այնպես էլ արտաքին արտահայտությունը զուսպ է, առանց դեկորի: Դատելով եկեղեցու կառուցվածքից, կարելի է ենթադրել, որ այս հուշարձանի նախկին շինությունը կառուցված է եղել սվելի վաղ շրջանում, որը շրջակա բնակատեղիների հուշարձանների հետ վերաձորոգվել է 17-րդ դարում: Նորակերտի եկեղեցու վերաձորոգումից մեկի ժամանակ նրա հյուսիսային և հարավային ավանդատների մուտքերի ճակատներին որպես բարավորներ, տեղադրվել են մեկական քանդակազարդ և վիմագրություն ունեցող խաչքարեր: Այդ խաչքարերը, որոնք ունեն մոտ 1,50 մ բարձրություն և 0,80 մ լայնություն, իրենց վրա կրում են հնաոճ խաչերի քանդակներ: Ցավոք, եղծվել և աղավաղվել է արձանագրությունների առանձին տառերը:

Հյուսիսային ավանդատան մուտքի բարավորի խաչքարի քառանկյունի շրջանակի մեջ վերցված խաչի քանդակից վերև 5 տող՝

1 [թվ] չկթ (1320)
1 [կան]կ
3 (ն)եցաւ
4 ս(ուրբ) խ(ա)չս
5 Պարոն Լսին